ԴԵՊԻ ՄԵԾ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 50-ԱՄՅԱԿԸ ԵՎ Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԸ

Ե. Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ԼԵՆԻՆԻԶՄԸ ՄԱՐՔՍԻԶՄԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԱՍՏԻՃԱՆՆ Է

Հիսուն տարի առաջ, 1917 թ. հոկտեմբերի 25-ին (նոյեմբերի 7-ին) «Ավրորա»-ի համազարկերը ազդարարեցին մարդկության պատմության նոր գարաշրջանի՝ կապիտալիզմի կործանման, կոմունիզմի հաղթանակի դարաշրջանի սկիզբը։ Ռուսաստանում սոցիալիստական հեղափոխության հաղթանակը նշանավորեց մարդկության ճակատագրում, համաշխարհային պատմության մեջ արմատական շրջադարձ՝ հին, կապիտալիստական աշխարհից, դեպի նոր, սոցիալիստական աշխարհը։ Դա աշխարհում ամենազոր ուսմունքի՝ մարքսիզմ-լենինիզմի մեծ հաղթանակն էր։

Հիսուն տարի է, ինչ սոցիալիզմի հաղթական դրոշը ծածանվում է մեր Հայրենիքի վրա։ Հիսուն տարի է, ինչ սովետական ժողովուրդը, լենինյան կուսակցության իմաստուն առաջնորդությամբ, բարձր ծածանելով մարքսիզմ-լենինիզմի դրոշը, բազմապատկում է մեծ Հոկտեմբերի նվաճումները, կառուցում կոմունիզմ։

Մեր Հայրենիքի անցած հիսունամյա փառապանծ ուղին Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի և Վ. Ի. Լենինի անմահ ուսմունքի հաղթանակի մեծ տարեգրությունն է։

Մարդկության պատմությանը հայտնի են մտածողների, գիտնականների և հեղափոխական գործիչների շատ անուններ։ Դրանց պայծառ համաստեղության բարձունքներից հավերժաբար շողշողում են Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի և Վ. Ի. Լենինի անունները, որոնց աշխարհացունց ուսմունքը՝ մարքսիզմ-լենինիզմը հանդիսանում է միջազգային պրոլետարիատի պայքարի մարտական դրոշը, աշխատավոր զանգվածների լուսատու աստղը։

Կ. Մարքսի կյանքն ու գործունեությունն ընթացավ աշխարհը հեղափոխական ճանապարհով վերափոխելու նշանաբանով։ Մարքսիզմը որպես պրոլետարիատի գիտական աշխարհայացք, օրինական հաջորդն է այն լավագույնի, ինչ մարդկությունն ստեղծել է XIX դարում՝ հանձին գերմանական փիլիսոփայության, անգլիական քաղաքատնտեսության և ֆրանսիական սոցիալիզմի։ Կ. Մարքսը և նրա մերձավոր զինակից Ֆ. Էնգելսը XIX դարի կեսերին մեծագույն հեղաշրջում կատարեցին գիտության և հասարակական մտքի զարգացման պատմության մեջ։ Նրանք կանգ չառնելով իրենց նախորդած դարի ֆրանսիական ու ֆոյերբախյան մատերիալիզմի և գերմանական դասական փիլիսոփայության բարձրակետ հանդիսացող Հեգելյան դիալեկտիկայի վրա, առաջ շարժեցին փիլիսոփայությունը, ստեղծելով ամենահեղափոխական ու ճշմարտացի ուսմունք՝ դիալեկտիկական ու պատմական մատերիալիզմը։

Կ. Մարքսն իր դարաշրջան կազմող «Կապիտալ»-ով, որի առաջին հատորը լույս է տեսել 100 տարի առաջ, 1867 թ., Համբուրգում, և այլ աշխատություններով, Ֆ. Էնգելսի հետ միասին հիմք դրեց նոր, մարքսիստական քաղաքատնտեսությանը։

«Կապիտալ»-ը մեր դարաշրջանի տնտեսական-քաղաքական նշանավոր երկն է։ Նրանում ամփոփված են տեսական-քաղաքական այն բոլոր հայտնագործությունները, որ մարքսիզմը բացահայտել է մինչև Վ. Ի. Լենինը։ XIX դարի 40-ական թվականներին, երբ կազմավորվում էին Կ. Մարքսի հայացքները, կապիտալիզմն անցել էր զարգացման որոշ ուղի։ Արևմտյան Եվրոպայի երկրներում արդյունաբերական կապիտալը սկզբնավորվել և առաջ էր շարժվում XVI դարից։ Ֆրանսիայում և Անգլիայում կապիտալիզմին հատուկ հակասությունները ակնառու կերպով դրսևորվեցին XIX դարի երկրորդ քառորդում։ Կապիտալիստական հարաբերությունների բազայի վրա ծնունդ առած պրոլետարիատը, որ լցվել էր արդյունաբերական կենտրոնները, հանդես եկավ որպես ուրույն քաղաքական ուժ։ Լիոնի տեքստիլագործների 1831 թ. առաջին ապստամբությունը, 1838—1842 թթ. անգլիական բանվորական առաջին փոթորկոտ ելույթները՝ չարտիստական շարժումը, անցյալ դարի 40-ական թվականներին Գերմանիայում բանվորական ղանգվածների հնչեցրած ազատաշունչ պահանջները, Սիլեզիայի ջուլհակների 1844 թ. ապստամբությունը, Արևմտյան Եվրոպայի և մի շարք երկրներում պրոլետարիատի և բուրժուազիայի միջև մղված դասակարգային գոտեմարտերը արթնացրին բանվորական ղանգվածներին։ Դա, Վ. Ի. Լենինի արտահայտությամբ, մի ժամանակաշրջան էր, երբ Եվրոպայում բուրժուական դեմոկրատիայի հեղափոխականությունն արդեն մահանում էր, իսկ սոցիալիստական պրոլետարիատի հեղափոխականությունը տակավին չէր հասունացել։ Կապիտալիզմն այն ժամանակ ապրում էր իր զարգացման սկզբնաշրջանը։ Պրոլետարիատը դեռևս չէր ազատագրվել բուրժուազիայի քաղաքական և գաղափարական ազդեցությունից։ Բանվորները, մասնավորապես գերմանական բանվորները, լիովին չէին խզել իրենց կապերը արհեստավորական, մանրբուրժուական անցյալի հետ։ Դրա կողքին, ֆաբրիկա-գործարանային արդյունաբերությունը, նույն ժամանակաշրջանում, Ֆրանսիայում, Պրուսիայում, Բելգիայում, ԱՄՆ-ում և մի շարք այլ երկրներում աճում էր անզուսպ թափով։ Արդյունաբերական հեղաշրջումը, դասակարգային պայքարի նոր փուլը իր արտացոլումը գտավ գաղափարախոսության՝ բանվորների գիտակցության մեջ։ Բանվորական միջավայրում աճում էր բնության և հասարակության զարգացման օրենքների իմացության, հասարակության մեջ կատարվող փոփոխությունների, դասակարգային հակասությունների և քաղաքական խորունկ հեղաշրջումների ըմբռնման պահանջը։ Կենդանի հետաքրքրություն էր առաջանում դեպի տնտեսական հարցերը։ Բանվորական խմբակները բարենպաստ հող էին հանդիսանում Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի գաղափարների ըմբռնման և տարածման համար։ Զուգակցելով լեգալ և անլեգալ աշխատանքը, օգտագործելով մամուլը, կապեր հաստատելով այն ժամանակվա սոցիալիստական շարժման աչքի ընկնող գործիչների հետ, Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը պրոպագանդում էին իրենց հայացքները։ Նրանք սերտ հարաբերություններ ունեին «Արդարների միություն» կոմունիստական գաղտնի ընկերության հետ։

Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը մտքի անսովոր թռիչքով, քննադատելով մանրբուրժուական սոցիալիզմի զանազան ուսմունքները, 1846—1847 թթ. վճռական ազդեցություն ունեին «Արդարների միության» վրա, որը Եվրոպայի բանվորական ամենախոշոր հեղափոխական և ինտերնացիոնալ կազմակերպությունն էր։ Այն ժամանակ բանվորների մեջ տարածված ուտոպիստական ու մանրբուրժուական գաղափարներին Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը հակադրեցին պրոլետարիատի կազմակերպված դասակարգային պայքարի՝ պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման, ճնշված ու շահագործվող զանգվածների հեղափոխության վերաբերյալ իրենց տեսությունը։ Նրանք հեղափոխական խանդավառությամբ պայքարում էին Գ. Տրյունի՝ գերմանական «ճշմարիտ սոցիալիզմի» ներկայացուցիչների մանրբուրժուական ուղղության և Պրուդոնի ուսմունքի դեմ, որը քարոզում էր, թե՝ բանվորների դրությունը կարելի է բարելավել պահպանելով բուրժուական հարաբերությունները։ Առաջինը Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսն էին,—գրել է Վ. Ի. Լենինը,—որ իրենց գիտական աշխատություններում պարզաբանեցին, թե սոցիալիզմը ոչ թե երազողների մտահորինումն է, այլ արդի հասարակության արտադրողական ուժերի զարգացման վերջնական նպատակն ու անհրաժեշտ արդյունքը։ Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի անսպառ եռանդն ու անզիջում պայքարը, պրոպագանդիստական եռանդուն աշխատանքը հաջողությամբ պսակվեցին։ Շուտով նրանք «Արդարների միության» Կենտրոնական կոմիտեի կողմից հրավիրվեցին մտնելու միության մեջ և մասնակցելու Միության համագումարին, շարադրելու իրենց հայացքները։ Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը ընդառաջեցին այդ առաջարկին։

1847 թ. ամռանը Ֆ. Էնգելսի մասնակցությամբ տեղի ունեցավ «Արդարների միության» առաջին համագումարը։ Միությունը վերակառուցվեց։ Մշակվեց կանոնադրություն, որի առաջին հոդվածում, Ֆ. Էնգելսի ձևակերպմամբ ասված էր. «Միության նպատակն է՝ տապալել բուրժուազիան, հաստատել պրոլետարիատի տիրապետությունը, ոչնչացնել դասակարգային հակամարտության հիման վրա կառուցված հին բուրժուական հասարակարգը և ստեղծել նոր հասարակություն՝ առանց դասակարգերի և առանց մասնավոր սեփականության»[1]։

Վերակառուցումից հետո «Արդարների միությունը» կոչվեց «Կոմունիստների միություն», որը նոր, անլեգալ կազմակերպություն էր և պրոպագանդում էր կոմունիզմի գաղափարները։ «Բոլոր մարդիկ եղբայրներ են» լոզունգի փոխարեն «Կոմունիստների միությունը» հռչակեց Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի առաջ քաշած «Պրոլետարներ բոլոր երկրների, միացեք» հեղափոխական, ինտերնացիոնալ կոչը, որը և դարձավ «Կոմունիստների միության», միջազգային բանվորական և կոմունիստական շարժման կարգախոսը։

1847 թ. նոյեմբերի վերջին և դեկտեմբերի սկզբին Լոնդոնում գումարված «Կոմունիստների միության» երկրորդ համագումարը (կոնգրեսը) Միության ծրագրի նախագծի՝ «Կոմունիզմի սկզբունքների» շուրջը ծավալված ավելի քան տասնօրյա բուռն վիճաբանություններից հետո, որոշեց հանձնարարել Կ. Մարքսին և Ֆ. Էնգելսին կազմել «Կոմունիստների միության» տեսական-գործնական ծրագիրը և այն հրատարակել որպես Միության մանիֆեստ[2]։

---

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч., том XIX, стр. 105.
[2] См. К. Маркс и Ф. Энгельс, Избранные произв., т. 2, стр. 330.

Կարճ ժամանակամիջոցում Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը գրեցին Մանիֆեստը և 1848 թ. հունվարի վերջերին Բրյուսելից ուղարկեցին Լոնդոն՝ տպագրության համար։

1848 թ. փետրվարին Գերմանիայի մարտյան հեղափոխության նախօրյակին լույս տեսավ Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը»՝ մարքսիզմի ծրագրային առաջին փաստաթուղթը, գիտական կոմունիզմի մեծ ստեղծագործությունը, միջազգային պրոլետարիատի հավատո հանգանակը։ «Կոմունիստական կուսակցության մանիֆեստում» «...հանճարեղ պարզությամբ ու ցայտունությամբ ուրվագծված է նոր աշխարհայեցողությունը,—գրել է Վ. Ի. Լենինը,—նաև սոցիալական կյանքի բնագավառն ընդգրկող հետևողական մատերիալիզմը, դիալեկտիկան, որպես ամենարազմակողմանի ու խոր ուսմունք զարգացման մասին, դասակարգային պայքարի և նոր, կոմունիստական հասարակություն ստեղծող պրոլետարիատի համաշխարհային-պատմական հեղափոխական դերի թեորիան»[3]։

«Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» երևան գալը շրջադարձային իրադարձություն հանդիսացավ միջազգային պրոլետարիատի հեղափոխական շարժման և գիտական կոմունիզմի պատմության մեջ։ «Կարլ Մարքսի ուսմունքի պատմական բախտը» աշխատությունում (մարտ. 1913 թ.) Վ. Ի. Լենինը նշել է, որ Կ. Մարքսը իր ուսմունքն առաջին անգամ առաջադրեց 1844 թ., բայց «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» արդեն տալիս է այդ ուսմունքի ամբողջական սիստեմատիկ, մինչև օրս լավագույնը մնացող շարադրանքը[4]։

«Համաշխարհային պատմությունը այդ ժամանակից ի վեր,—գրել է Վ. Ի. Լենինը,—ակներևորեն բաժանվում է երեք գլխավոր ժամանակաշրջանների. 1. 1848 թվականի հեղափոխությունից մինչև Փարիզյան կոմունան (1871), 2. Փարիզյան կոմունայից մինչև ռուսական հեղափոխությունը (1905), 3. Ռուսական հեղափոխությունից սկսված»[5]։

«Կոմունիստական կուսակցության մանիֆեստում» դասական ձևով շարադրված է Կ. Մարքսի ուսմունքը կոմունիստական կուսակցության առաջավոր և դեկավար դերի, բանվոր դասակարգի ավանգարդի, կազմակերպված ջոկատի վերաբերյալ։ 1890 թ. «Կոմունիստական մանիֆեստի» առաջաբանում Ֆ. Էնգելսը գրել է. «Ներկայումս «Մանիֆեստը» անկասկած ամբողջ սոցիալիստական գրականության ամենատարածված, ամենից ավելի միջազգային երկն է, բոլոր երկրների բազմամիլիոն բանվորների ընդհանուր ծրագիրը՝ Սիբիրից մինչև Կալիֆորնիա»[6]։

Վ. Ի. Լենինը, բարձր գնահատելով «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» նշանակությունը, 1895 թ. գրել է. «Նրա ոգով է ապրում և շարժվում մինչև այժմ քաղաքակիրթ աշխարհի ամբողջ կազմակերպված ու մարտնչող պրոլետարիատը»[7]։

---

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 21, էջ 45—46։

4 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 18, էջ 736։

5 Նույն տեղում։

6 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Կոմունիստական պարտիայի մանիֆեստը, Երևան, 1952, էջ 27։

7 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 2, էջ 12։

1848 թ. հեղափոխությունը մահացու հարված հասցրեց նախամարքսյան սոցիալիզմի գաղափարախոսությանը։

«Կոմունիստների միությունը» բանվորների միջազգային ընկերության՝ առաջին ինտերնացիոնալի նախորդն էր։ «Կոմունիստական մանիֆեստի» հեղափոխական գաղափարների՝ «Պրոլետարներ բոլոր երկրների, միացեք» մարքսիստական նշանաբանի, արգասավոր բախումների, բանվոր դասակարգի հեղափոխական ուժերի ինտերնացիոնալ համախմբվածության ոգով է ընթացել 1864 թ. սեպտեմբերի 28-ին Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի հիմնադրած Բանվորների միջազգային ընկերության՝ Առաջին ինտերնացիոնալի (1864—1871) գործունեությունը։

Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի համաշխարհային պատմական ծառայությունն ամենից առաջ այն է, որ նրանք ստեղծեցին պրոլետարիատի ուսմունքը՝ նոր, մարդկության ամենակենսական շահերն արտահայտող ամբողջական ուսմունքը, և դրանով իսկ դարձան գիտական կոմունիզմի հիմնադիրները։ Նրանք սոցիալիզմը ուտոպիայից վերածեցին գիտության, անհերքելիորեն ապացուցեցին կապիտալիզմի փլուզման անխուսափելիությունը, մարդկության անցումը դեպի կոմունիզմ։

Առաջին ինտերնացիոնալը խոշոր դեր է խաղացել սոցիալիզմը բանվորական շարժմանը միացնելու, մարքսիզմի գաղափարները տարածելու գործում։ Կ. Մարքսը 1867 թ. նոր էր ավարտել իր քսանամյա քրտնաջան աշխատանքի արգասիքը հանդիսացող «Կապիտալ»-ի առաջին հատորը, երբ Առաջին ինտերնացիոնալի երկրորդ կոնգրեսը (Բրյուսել, 6—13 սեպտեմբեր, 1868 թ.) հատուկ բանաձև ընդունեց պրոլետարիատի տեսական զինման գործում դարաշրջան կազմող այդ երկի մասին։ Կոնգրեսը հանձնարարեց բոլոր ազգությունների բանվորներին՝ ուսումնասիրել նոր լույս տեսած «...Դարի մեծագույն քաղաքատնտեսական երկը՝ «Կապիտալ»-ը»։

Առաջին ինտերնացիոնալը, լինելով բանվորների միջազգային ընկերություն, բոլոր երկրների բանվորական և կոմունիստական կուսակցությունների պատմության սկիզբը, իր գործունեության մեջ ղեկավարվել է Կ. Մարքսի «Կապիտալ»-ի և Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ի ու այլ երկերի սկզբունքներով։ Որպեսզի Առաջին ինտերնացիոնալը հասներ Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի հռչակած նպատակին՝ «Եվրոպայի և Ամերիկայի բանվոր դասակարգի բոլոր մարտական ուժերի մեծ բանակի մեջ միավորելուն», հարկ է եղել անհաշտ պայքար մղել հակապրոլետարական գաղափարախոսության զանազան տարատեսակների դեմ։

Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը, իբրև ազատագրական մտքի սերմնացաններ, մշակեցին բանվոր դասակարգի ավանգարդի՝ կոմունիստական կուսակցության գիտական աշխարհայացքը, նրա գործունեության ստրատեգիան ու տակտիկան, որոնք չունեն ազգային սահմանափակություն, այլ կենսագործելի են բոլոր երկրների համար և ունեն միջազգային նշանակություն։

Կ. Մարքսի ուսմունքի մեջ նորը և գլխավորը ոչ թե դասակարգային կռիվն է, այլ պրոլետարիատի դիկտատուրան, պրոլետարիատի, իբրև սոցիալիստական հասարակության կերտողի, համաշխարհային, պատմական դերի պարզաբանումը։ Դեռևս 1852 թ. մարտի 5-ին Կ. Մարքսը Իոսիֆ Վայդեմայե-

---

[8] Նույն տեղում, էջ 131։

ին գրած նամակում նշել է. «Իմ արած նորն այն է, որ ես ապացուցել եմ հետևյալը 1. որ դասակարգերի գոյությունը *կապված է արտադրության զարգացման որոշ պատմական ֆազերի հետ միայն, 2. որ դասակարգային պայքարը անհրաժեշտաբար տանում էր դեպի* պրոլետարիատի դիկտատուրան, *3. որ այդ դիկտատուրան ինքը սոսկ մի անցում է դեպի* ամեն տեսակ դասակարգերի ոչնչացումն *ու դեպի անդասակարգ հասարակությունը»*[9]:

Պատմությունը հարուստ է ազատագրական հորձանքներով, մրրկահույզ հանգույցներով: 1871 թվականով բացվում է համաշխարհային պատմության նոր դարաշրջանը: Այդ թվականը երկու դարաշրջանների սահմանագիծ դարձավ ամենից առաջ այն պատճառով, որ այդ տարվա մարտի 18-ին, մարդկության պատմության մեջ առաջին անգամ, թեկուզև կարճ ժամանակով, Փարիզում պետական իշխանությունն անցավ ամենաառաջավոր, մինչև վերջը միակ հեղափոխական դասակարգի՝ պրոլետարիատի ձեռքը: Փարիզի կոմունան բանվոր դասակարգի՝ իր համար քաղաքական իշխանություն նվաճելու, իր սեփական կառավարությունն ստեղծելու, պրոլետարիատի դիկտատուրա հաստատելու առաջին լուրջ փորձն էր: Փարիզի կոմունան նոր տիպի պետության, պրոլետարական պետության սաղմն էր, սովետների նախատիպը: Գերմանացի սոցիալիստ Լ. Կուգելմանին 1871 թ. ապրիլի 12-ին ուղարկած նամակում, Կ. Մարքսը, հիացմունքով խոսելով Փարիզի կոմունարների մասին, գրել է, որ նրանք այնպիսի մարդիկ են, որոնք պատրաստ են «գրոհելու երկինք»: «Ինչպիսի՜ ճկունություն, ինչպիսի՜ պատմական նախաձեռնություն, անձնազոհության ինչպիսի՜ ընդունակություն ունեն այդ փարիզցիները: Պատմությունը չգիտե այդպիսի հերոսության մի այլ օրինակ»[10]:

Փարիզի կոմունան, թեև գոյություն ունեցավ 72 օր, բայց նրա նշանակությունը միջազգային պրոլետարիատի հետագա ազատագրական պայքարի համար վիթխարի էր: Կոմունան մահացու սպառնալիք հանդիսացավ ստրկացման ու շահագործման վրա հիմնված հին աշխարհի համար: «Փարիզյան թնդանոթների որոտը,—գրել է Վ. Ի. Լենինը,—արթնացրեց պրոլետարիատի՝ խոր քնով քնած ամենահետամնաց խավերին և ամենուրեք խթանեց հեղափոխական-սոցիալիստական պրոպագանդայի ուժեղացմանը»[11]:

Փարիզի կոմունայի գործը սոցիալիստական հեղափոխության գործն է, աշխատավորների լիակատար քաղաքական ու տնտեսական ազատագրման գործն է, համայն աշխարհի պրոլետարիատի գործն է: Կոմունան եվրոպական պրոլետարիատին սովորեցրեց կոնկրետ կերպով դնել սոցիալիստական հեղափոխության խնդիրները,—1908 թվականին գրել է Վ. Ի. Լենինը: Իսկ 1911 թ. ապրիլին Վ. Ի. Լենինը ընդգծել է. «Որպես սոցիալիստական հեղափոխության առաջավոր մարտիկ, կոմունան համակրանք է ձեռք բերել ամեն տեղ, ուր տառապում ու պայքարում է պրոլետարիատը: Նրա կյանքի ու մահվան պատկերը, բանվորական կառավարության կերպարանքը, որ գրավեց ու իր ձեռքում ավելի քան երկու ամսվա ընթացքում պահեց աշխարհի մայրաքաղաքը,

---

9 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հատ. II, էջ 583—684, նույնը, Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Վ. Ի. Լենին, Գիտական կոմունիզմի մասին, Երևան, 1965, էջ 202—203:

10 См. К. Маркс — Л. Кугельману, 12 апреля 1871 г., К. Маркс и Ф. Энгельс. Избранные письма, М., 1953. стр. 263.

11 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 17, էջ 159:

պրոլետարիատի հերոսական պայքարի և պարտվելուց հետո նրա տառապանքի տեսարանը,—այս ամենը բարձրացրեց միլիոնավոր բանվորների ոգին, զարթնեցրեց նրանց հույսերը և նրանց համակրանքն ուղղեց դեպի սոցիալիզմը»[12]։ Ցյուրիխում եղած ժամանակ, 1917 թ. մարտի 24-ին, Վ. Ի. Լենինը գրել է, թե՝ ընթանալով այն ուղիով, որ նշել է 1871 թ. Փարիզի կոմունայի և 1905 թ. ռուսական հեղափոխության փորձը, պրոլետարիատը պետք է կազմակերպի և կինի բնակչության բոլոր չքավոր, շահագործվող մասերին, որպեսզի նրանք իրենք կազմեն այդ իշխանության հիմնարկները։ Իսկ 1917 թ. ապրիլի կեսերին Վ. Ի. Լենինը նշել է՝ կոմունայի իսկական էությունն այնտեղ չէ, որտեղ այն սովորաբար փնտրում են բուրժուաները, այլ առանձին տիպի պետություն ստեղծելն է։

Առաջին ինտերնացիոնալի ոգին, նրա հիմնադիրը, քաղաքական և կազմակերպչական ղեկավարը Կ. Մարքսն էր։ Ինտերնացիոնալն իր մարտական ջոկատներով շատ բան արեց մարքսիզմի՝ այդ ամենագոր և ճշմարիտ ուսմունքի տարածման գործում։ Տասը տարվա ընթացքում ինտերնացիոնալը իշխում էր եվրոպական երկրների սոցիալիստական շարժման և նրա պատմության վրա։ Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը, հաշվի առնելով Առաջին ինտերնացիոնալի փորձը, 1872 թ. «Մանիֆեստի» առաջաբանում գրել են, որ «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» հիմնական դրույթների կիրառումը «միշտ և ամենուրեք կախված կլինի գոյություն ունեցող պատմական պայմաններից»[13]։

Եթե իր ծագման առաջին շրջանի սկզբում մարքսիզմը սոցիալիզմի բազմաթիվ տեսակներից մեկն էր, ապա երկրորդ շրջանում (1872—1904) այն կատարյալ հաղթանակ տարավ։ XIX դարի երկրորդ կեսից մարքսիզմը լայնորեն տարածվում է բանվոր դասակարգի, հարստահարված աշխատավորական զանգվածների շրջանում, հաղթանակ է տանում բանվորական շարժման մեջ՝ մանրբուրժուական հոսանքների, գիտական սոցիալիզմին նախորդած ուղղությունների նկատմամբ։

Երկա՜ր է բանվորական շարժման ճանապարհը, լի դժվարին զիգզագներով... Դանդա՜ղ, բայց անշեղորեն առաջ է ընթանում պրոլետարական ուժերը համախմբելու, գալիք հեղափոխական գոտեմարտերի նախապատրաստելու պրոցեսը։

«Պատմության դիալեկտիկան այնպես է,—1913 թվականի մարտի 1-ին «Պրավդա»-ում գրել է Վ. Ի. Լենինը,—որ մարքսիզմի թեորիական հաղթանակը ստիպում է իր թշնամիներին մարքսիստի զգեստ հագնել»[14]։

Երկրորդ ինտերնացիոնալի օրրանի մոտ, առաջին հինգ տարում, Ֆ. Էնգելսը հետևողական պայքար ծավալեց օպորտունիզմի դեմ, օպորտունիզմ, որը Երկրորդ ինտերնացիոնալին հասցրեց ամոթալի կրախի։

Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի մահից հետո Եվրոպայի և Ամերիկայի բանվորական շարժման մեջ որոշ ժամանակ վաստորեն իշխում է օպորտունիզմը, որը քարոզում էր «սոցիալական հաշտություն» և հրաժարումը դասակարգային պայքարից։

---

12 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 17, էջ 159։
13 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Կոմունիստական պարտիայի մանիֆեստը, էջ 6։
14 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 18, էջ 738։

Պատմական այդ բախտորոշ պահին քաղաքական հորիզոնում արևի պես ճառագեց Վ. Ի. Լենինի հանճարը։

* * *

Վ. Ի. Լենինը իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխությունների դարաշրջանում մարքսիստական գիտությունը հարստացրեց նոր դրույթներով և եզրահանգումներով, ստեղծեց ամբողջական ուսմունք պրոլետարիատի դիկտատուրայի և կոմունիստական կուսակցության մասին, մշակեց սոցիալիստական հեղափոխության ավարտուն թեորիան, հիմնավորեց սոցիալիզմի հաղթանակի հնարավորությունը սկզբում մի քանի կամ նույնիսկ մեկ առանձին վերցրած երկրում։ Այնուհետև, նա մշակեց ՍՍՀՄ-ում սոցիալիստական հասարակարգի կառուցման, սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելու ուղիները։

Վ. Ի. Լենինը անկրկնելի մեծություն է։ Նա իր մեջ մարմնավորել էր այն ամենը, ինչ պրոլետարիատի մեջ իսկապես վեհ է, ազնիվ և հերոսական։

Աշխարհի արգանդից շատ հանճարեղ մարդիկ են ծնվել.

Այնինչ Իլյիչը—մե՛կ է,
Ուրիշ Իլյիչ—դժվա՞ր թե,
Ուրիշ Իլյիչ—չկա...[15],

— «Տվե՛ք մեզ ռևոլյուցիոներների կազմակերպություն—և մենք շո՛ւռ կտանք Ռուսաստանը»[16],— XX դարի սկզբին հայտարարեց Վ. Ի. Լենինը։ Հենց այդ կազմակերպության ստեղծմանն էլ նվիրեց իր ամբողջ գիտակցական կյանքը մարդկության մեծագույն հանճարը։ Հանդես գալով XIX դարի վերջերին, հետևողականորեն շարունակելով միջազգային պրոլետարիատի մեծ ուսուցիչներ Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի անմահ գործը, Վ. Ի. Լենինը Ռուսաստանի հերոսական պրոլետարիատին զինեց հեղափոխական մարքսիզմով, իր հանճարի ուժով լուսավորեց բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության պայքարի ուղին։ Տակավին 1894 թվականին, Վ. Ի. Լենինն իր «Ի՞նչ են «ժողովրդի բարեկամները» և ինչպես են նրանք մարտնչում սոցիալ-դեմոկրատների դեմ» առաջին խոշոր աշխատությունում՝ պաշտպանելով մարքսիստական տեսությունը և է՛լ ավելի զարգացնելով այն, վառ կերպով բնութագրեց տեսության վիթխարի ուժը, ցույց տվեց, որ բանվոր դասակարգը ամենաառաջավոր, հեղափոխական դասակարգն է մարդկային հասարակության պատմության մեջ, և որ այն իր կեցությամբ պետք է հանդիսանա կապիտալիզմի գերեզմանափորը։ Իր այդ դասական երկում Վ. Ի. Լենինը, առաջին անգամ առաջ քաշելով բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի գաղափարը, ցույց տվեց ռուսական բանվոր դասակարգի, որպես միջազգային բանվորական շարժման ավանգարդի, պատմական մեծագույն դերը։

«...ռուսական ԵԱՎՈՐԸ բոլոր դեմոկրատական տարրերի գլուխ անցած,— գրել է Վ. Ի. Լենինը,—ոտքի ելնելով կտապալի արսոլյուտիզմը և ՌՈՒՍԱԿԱՆ

15 Եդիշե Չարենց. Ընտիր երկեր, Երևան, 1955, էջ 104։
16 Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 5, էջ 622։

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻՆ (ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ *պրոլետարիատի հետ կողք-կողքի)* բացահայտ քաղաքական պայքարի ուղիղ ճանապարհով կառաջնորդի դեպի ՀԱՂԹԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՆ»[17]:

Անցյալ դարի 90-ական թվականներին Վ. Ի. Լենինի ծավալած քաղաքական-տեսական գործունեությունը, համարձակորեն առաջ քաշած գաղափարներն ու կանխատեսումները, մարքսիզմը Ռուսաստանում տարածելն ու ստեղծագործաբար կիրառելը, մարքսիզմի աղճատման փորձերի և օպորտունիզմի դեմ մղված անհաշտ հետևողական պայքարը, պրոլետարական կադրերին հեղափոխական ոգով դաստիարակելը, Ռուսաստանի մասսայական բանվորական շարժման նոր փորձի գիտական ընդհանրացումը մարքսիզմի զարգացման նոր, լենինյան էտապի սկիզբը դրեցին։

Ռուսաստանը լենինիզմի հայրենիքն է։

Վ. Ի. Լենինն իր հեղափոխական գործունեության առաջին տասնամյակում անհաշտ պայքար ծավալեց լիբերալ նարոդնիկության և «լեգալ մարքսիզմի» տնայնագործության և խմբակայնության, «էկոնոմիստների» դեմ։ Սա ցույց տվեց, որ «էկոնոմիստները» խաբում են բանվոր դասակարգին, պնդելով, թե սոցիալիստական գաղափարախոսությունը կարող է ծագել բանվոր դասակարգի տարերային շարժումից։ Իրականում սոցիալիստական գաղափարախոսությունը, ինչպես ապացուցում էր Վ. Ի. Լենինը, ծագում է գիտությունից և բանվորական շարժման մեջ մուծվում հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի միջոցով։ Հարցը դրվում է միայն այսպես, ասում էր Իլյիչը՝ բուրժուակա՞ն, թե՞ սոցիալիստական գաղափարախոսություն։ Այստեղ միջին չկա։ «Ուստի սոցիալիստական իդեոլոգիայի ամեն մի նվաստացում, ասենք թեկուզ նրանից՝ ինքնին նշանակում է բուրժուական իդեոլոգիայի ուժեղացում»[18]։ Բարձր պահելով մարքսիստական տեսության դրոշը, Վ. Ի. Լենինը գրում էր. «Առաջավոր մարտիկի դերը կատարել կարող է միայն այն պարտիան, որը ղեկավարվում է առաջավոր տեսությամբ»[19]։

Իր գործունեության առաջին իսկ օրերից պաշտպանելով մարքսիզմը, Վ. Ի. Լենինը բացառիկ նշանակություն էր տալիս նրա հետագա ստեղծագործական մշակմանն ու բանվորական շարժման փորձով հարստացմանը։ Տակավին 1895 թ. «Աշխատանքի ազատագրություն» խմբի կողմից հրատարակած «Ռուսական սոցիալ-դեմոկրատների խնդիրները» բրոշյուրում նա նշել է. «Մենք Մարքսի տեսության վրա բնավ էլ չենք նայում որպես մի ինչ-որ ավարտուն և անձեռնմխելի բանի. մենք համոզված ենք, ընդհակառակը, որ այն դրել է միայն անկյունաքարերն այն գիտության, որը սոցիալիստները պետք է առաջ շարժեն բոլոր ուղղություններով, եթե նրանք չեն ցանկանում կյանքից ետ մնալ։ Մենք կարծում ենք, որ ռուս սոցիալիստների համար հատկապես անհրաժեշտ է Մարքսի տեսության ինքնուրույն մշակումը, որովհետև այդ տեսությունը տալիս է միայն ընդհանուր ղեկավար դրույթները, որոնք կիրառվում են մասնավորապես Անգլիայի նկատմամբ այլ կերպ, քան Ֆրանսիայի նկատմամբ, Ֆրանսիայի նկատմամբ այլ կերպ, քան Գերմանիայի նկատմամբ, Գերմանիայի նկատմամբ այլ կերպ, քան Ռուսաստանի նկատմամբ»[20]։

---

17 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 1, էջ 382։
18 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 5, էջ 507։
19 Նույն տեղում, էջ 488։
20 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 4, էջ 262։

Վ. Ի. Լենինի մեծագույն ծառայությունը մարդկության առջև ամենից առաջ այն էր, որ նա ստեղծեց ու կոփեց բոլշևիկների կուսակցությունը, որը զեկավարվում է առաջավոր տեսությամբ։ «Բոլշևիզմը,—գրել է Վ. Ի. Լենինը,—որպես քաղաքական մտքի հոսանք և որպես քաղաքական պարտիա, գոյություն ունի 1903 թվականից»[21]։

Վ. Ի. Լենինը մարքսիզմի պատմության մեջ առաջին անգամ համարձակորեն մշակեց ուսմունք կուսակցության մասին, որպես պրոլետարիատի զեկավար կազմակերպության, որպես նրա հիմնական զենքի, առանց որի անհնար է նվաճել պրոլետարիատի դիկտատուրա, կառուցել սոցիալիզմ և կոմունիզմ։ Վ. Ի. Լենինը խորապես հիմնավորեց այն դրույթը, թե՝ կուսակցությունը բանվորական շարժման միացումն է սոցիալիզմի հետ, որ բոլշևիկյան կուսակցությունը բանվոր դասակարգի առաջավոր ջոկատն է, նրա քաղաքական առաջնորդը, պրոլետարիատի մարտական շտաբը, որ կուսակցությունը բանվոր դասակարգի կազմակերպված ջոկատն է, պրոլետարիատի դասակարգային կազմակերպության բարձրագույն ձևը։ Կուսակցության ամրության և անհաղթելիության հիմքը Վ. Ի. Լենինը համարում է նրա շարքերի անսասան միասնությունը։ Վ. Ի. Լենինը պահանջում էր աչքի լույսի պես պահպանել կոմունիստական կուսակցության շարքերի միասնությունն ու անաղարտությունը, «...պարտիայի անդամի կոչումն ու նշանակությունը ավելի, ավելի ու ավելի բարձրացնել»[22]։

Վ. Ի. Լենինը կոմունիստական կուսակցության ուժը տեսնում էր աշխատավոր զանգվածների հետ ունեցած նրա սերտ կապի մեջ։ Որքան սերտ և ամուր է կոմունիստական կուսակցության և աշխատավոր զանգվածների, պատմության այդ իսկական կերտողների միջև եղած կապը, այնքան ավելի բեղմնավոր է կուսակցական կազմակերպությունների գործունեությունը։ «...կենդանի, ստեղծարար սոցիալիզմը հենց ժողովրդական մասսաների ստեղծագործությունն է»[23],—ասում էր Վ. Ի. Լենինը։

Վ. Ի. Լենինը պաշտպանեց և զարգացրեց կոմունիստական կուսակցության գաղափարական, կազմակերպական, տակտիկական, քաղաքական, տեսական հիմունքները, կուսակցությանն առաջնորդեց հեղափոխության անծանոթ ուղիներով։ Նա իր «Մատերիալիզմը և էմպիրիոկրիտիցիզմը» և այլ աշխատություններում համակողմանիորեն ցույց տվեց, որ աշխարհի գիտական պատկերը տալիս է միայն մեկ փիլիսոփայություն՝ դիալեկտիկական մատերիալիզմը, լուծեց մեծագույն խնդիրը՝ բնագիտության նորագույն հայտնագործությունների մարքսիստական ընդհանրացումը, պաշտպանեց և զարգացրեց մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմը, մարքսիստական մատերիալիստական դիալեկտիկան, պատմական մատերիալիզմը, զարգացրեց և հիմնավորեց փիլիսոփայության և գիտության կուսակցականության սկզբունքը։

Վ. Ի. Լենինի խոշորագույն ծառայություններից մեկն այն է, որ նա տվեց մատերիալիզմի սկզբունքի ամենահետևողական ու բազմակողմանի հիմնավո-

---

21 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 9։
22 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 6, էջ 642։
23 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 346։

րումը հասարակական կյանքի հետազոտման գործում և խորացնելով աշխարհի նյութականության ու նրա զարգացման օրենքների օբյեկտիվ բնույթի վերաբերյալ գիտական պատկերացումները, ամրապնդեց, ընդլայնեց հասարակության վերաբերյալ Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի ուսմունքի մատերիալիստական հիմքը։

Վ. Ի. Լենինը, անհաշտ պայքար ծավալելով միջազգային և ռուսական օպորտունիստների, բանվորական շարժման մեջ հակահեղափոխական հոսանքների և մարքսիզմի ռևիզիոնիստների դեմ, իր «Իմպերիալիզմը, որպես կապիտալիզմի բարձրագույն ստադիա», «Պետություն և հեղափոխություն» և այլ աշխատություններով հարստացրեց մարքսիզմը պատմական նոր պայմաններին համապատասխան, նոր դրույթներով։

Վ. Ի. Լենինը Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության կազմակերպիչն ու ոգեշնչողն է։

1917 թ. փետրվարի 27-ին (մարտի 12-ին) Ռուսաստանի բանվորների, գյուղացիների և զինվորների հաղթական ապստամբության շնորհիվ տապալվեց ցարական ինքնակալությունը՝ «Ռոմանովների դինաստիան», որն ավելի քան երեքհարյուր տարի դաժանորեն ճնշում էր և շահագործում Ռուսաստանի աշխատավոր զանգվածներին։ Ցարական ինքնակալության տապալման գործում վճռական դեր խաղացին Ռուսաստանի հերոսական բանվոր դասակարգը և նրա հավատարիմ դաշնակիցը՝ բազմամիլիոն գյուղացիությունը։ Սրանց հերոսական պայքարը գլխավորում էր բոլշևիկյան կուսակցությունը։

Ստեղծված բարդ իրադրության մեջ 1917 թ. հունիսի սկզբին գումարված սովետների համառուսաստանյան առաջին համագումարում, երբ մենշևիկների լիդեր Ծերեթելին հայտարարեց. «Ներկայումս Ռուսաստանում չկա մի այնպիսի քաղաքական կուսակցություն, որն ասեր իշխանությունը հանձնեցեք մեզ, հեռացեք, մենք կզբաղեցնենք ձեր տեղը...», վստահ ու վճռական տոնով հնչեց Վ. Ի. Լենինի ձայնը.

— Կա այդպիսի կուսակցություն։

Դա բոլշևիկյան, լենինյան կուսակցությունն էր, որի ղեկավարությամբ իրականացվեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը, բացվեց համաշխարհային պատմության նոր դարագլուխը։ «Ամբողջ իշխանությունը սովետներին» լոզունգով բանվորները, աշխատավոր գյուղացիները, զինվորներն ու նավաստիները գրոհեցին հին աշխարհի վրա և հաղթեցին։ Մեծ Հոկտեմբերի հաղթանակը հաստատեց սոցիալիստական հեղափոխության լենինյան տեսությունը։

Դեռևս Հոկտեմբերի նախօրյակին իր «Ռուսական հեղափոխությունը և քաղաքացիական պատերազմը» հոդվածում Վ. Ի. Լենինը գրել է. «...հաղթանակ տարած պրոլետարիատը Ռուսաստանին կտա խաղաղություն։ Եվ ոչ մի ուժ չի տապալի խաղաղության կառավարությունը, ազնի՜վ, անկե՜ղծ, արդա՜ր խաղաղության կառավարությունը»[24]։

Սովետական իշխանության առաջին դեկրետը խաղաղության դեկրետ էր։ Վ. Ի. Լենինը հայտարարել է, որ «Մեզ համար ամեն բանից թանկ է խաղա-

---

24 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 30։

ղության պահպանումն...»[25], որ «Ռուսաստանի բանվորներն ու գյուղացիները ամենից ավելի են գնահատում խաղաղության բարիքները»[26]։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո Վ. Ի. Լենինը հանդես է գալիս որպես կառավարող կուսակցության առաջնորդ, աշխարհում առաջին սոցիալիստական բազմազգ պետության հիմնադիր ու ղեկավար։ Ստեղծելով իր սոցիալիստական պետությունը, սովետական ժողովուրդը, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, ընթացավ անկոխ ուղիներով, ընդսմին հաղթահարելով մեծագույն դժվարություններ ու զրկանքներ, մեր երկիրը հասցնելով սոցիալիզմի լիակատար և վերջնական հաղթանակին։ «Սոցիալիզմը, որի անխուսափելիությունը գիտականորեն կանխագուշակել էին Մարքսը և Էնգելսը, սոցիալիզմը, որի կառուցման պլանը կանխագծել էր Լենինը, Սովետական Միությունում ռեալ իրականություն դարձավ»[27]։

Պատմության քառուղիներում բոլոր երկրների աշխատավոր զանգվածների մղած ազատագրական պայքարը մարդկությանը մոտեցրեց կոմունիզմին։ Սոսկ երազանքից և Եվրոպայում շրջող ուրվականից այն դարձավ արդիականության մեծագույն ուժը, մի հասարակարգ, որը կառուցվում է աշխարհի հսկայական տարածություններում։ Սոցիալիզմի համաշխարհային սիստեմը, կոմունիստական և բանվորական կուսակցությունների բուռն աճը մարքսիզմ-լենինիզմի հաղթանակի մեծ գրավականն են։

Մարքսիզմ-լենինիզմը իր ճանապարհին քիչ խոչընդոտներ չի հաղթահարել։ Հետևողական պայքար մղելով բուրժուական գաղափարախոսության դեմ, այն միաժամանակ անհաշտ մարտնչել է պրոլետարիատի կեղծ բարեկամների, բոլոր տեսակի ռևիզիոնիստների, ուրացողների և աղանդավորների դեմ։

Անցած 50 տարիների ընթացքում սովետական ժողովուրդը իր ավանգարդի՝ լենինյան կուսակցության ղեկավարությամբ հարկադրված է եղել դիմադրավելու սոցիալիզմի առաջին ջահակրի վրա կատարվող թշնամական հարձակումները։ Հավատարիմ լենինյան պատգամներին Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը և կառավարությունը հաստատակամորեն վարելով Չինաստանի հետ հարաբերությունների նորմալացման կուրս, միաժամանակ բացահայտում են Մաո Ցզե-Դունի և նրա խմբի հակասովետական քաղաքականությունը, պրովոկացիոն ոտնձգությունները։ Դավաճանելով մարքսիզմ-լենինիզմին՝ պրոլետարական ինտերնացիոնալիզմի վսեմ սկզբունքներին, Մաոցզեդունյան խմբավորումը վարում է մեծապետական, նացիոնալիստական գիծ, բորբոքում թունոտ շովինիզմի կրակը։ Ներկայումս, այն ինչ, որ այսպես կոչված «պրոլետարական կուլտուրական մեծ հեղափոխության» դրոշի տակ կատարվում է Չինաստանում, ոչ մի կապ չունի ոչ կուլտուրայի, ոչ պրոլետարիատի և ոչ էլ գիտական սոցիալիզմի հետ։ Այդ ամենը թշնամի է մարքսիզմ-լենինիզմին։ Դրա համար էլ Չինաստանի իրադարձությունները առաջ են բերում աշխարհի բոլոր ազնիվ մարդկանց խոր մտահոգությունը։

XX դարը մարքս-լենինյան գաղափարների կենսագործման դարն է։ Սովետական Միության կոմունիստական կուսակցության պատմությունը մարքսիզմ-լենինիզմն է գործողության մեջ։ Հավատարիմ մնալով Վ. Ի. Լենինի

25 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 131։

26 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 166։

27 Սովետական Միության կոմունիստական պարտիայի ծրագիրը, Երևան, 1964, էջ 17—18։

պատգամներին, կոմունիստական կուսակցությունն իր ամբողջ գործունեության իմաստը տեսնում է Նրանում, որպեսզի իրականացնի մարքս-լենինյան գաղափարները, կառուցի կոմունիստական հասարակարգ, ապահովի կայուն և արդար խաղաղություն, լիովին բավարարի ժողովրդի նյութական և հոգևոր պահանջմունքները։ «Կոմունիզմը,—ինչպես ասված է ՍՄԿԿ ծրագրում,—կատարում է բոլոր մարդկանց սոցիալական անհավասարությունից, ճնշման ու շահագործման բոլոր ձևերից, պատերազմի սարսափներից փրկելու պատմական միսիան և աշխարհում հաստատում է խաղաղություն, աշխատանք, ազատություն, հավասարություն, եղբայրություն ու երջանկություն բոլոր ժողովուրդների համար»[28]։

28 Սովետական Միության կոմունիստական պարտիայի ծրագիրը, Երևան, 1964, էջ 8։